Թողարկում N2, 2018

ՀԱՅԱՍՏԱՆ.

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃ «ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃ» ԳՈՒԼ

ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ
ՏԱԹԵՎԻԿ ԱԶԱՏՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2018

Թողարկում N2, 2018

ՀԱՅԱՍՏԱՆ.

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃ

«ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃ» ԳՈՒԼ

ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ, ՏԱԹԵՎԻԿ ԱԶԱՏՅԱՆ

«Հայաստան. դրամավարկային քաղաքականություն և տնտեսական աճ» վերլուծականը էլեկտրոնային պարբերական է, որի նպատակն է վերլուծել և հանրությանն ամփոփ կերպով ներակայացնել ՀՀ դրամավարակային քաղաքականության և տնտեսական աճի ընդհանրական պատկերը և միտումները:

Պարբերականը հրապարակվում է ՀՊՏՀ «Դրամավարկային քաղաքականություն և տնտեսական աճ» գիտաուսումնական լաբորատորիայի խմբի կողմից: Արտահայտված տեսակետները և եզրահանգումները պատկանում են հեղինակներին և կարող են չհամընկնել ՀՊՏՀ պաշտոնական տեսակետի հետ:

Հրապարակումից օգտվելիս պատշաճ հղումը պարտադիր է:

ԵՐԵՎԱՆ 2018

2017 Թ. ԵԱՏՄ ԱՆԴԱՄ ԵՐԿՐՆԵՐ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆՆԵՐ

Եվրասիական տնտեսական միություն՝ տարածաշրջանային տնտեսական ինտեգրման միջազգային կազմակերպություն է, օժտված միջազգային իրավասուբյեկտությամբ, հիմնադրված Եվրասիական տնտեսական միության մասին Պայմանագրով: Այդ պայմանագրով անդամ երկրները հիմնադրում են Եվրասիական տնտեսական միությունը (այսուհետ՝ Միություն, ԵԱՏՄ), որի շրջանակներում ապահովվում են ապրանքների, ծառայությունների, կապիտալի ու աշխատուժի տեղաշարժի ազատությունը, սույն Պայմանագրով և Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերով սահմանված տնտեսության ճյուղերում համակարգված, համաձայնեցված կամ միասնական քաղաքականության իրականացումը:

Միությունը տարածաշրջանային տընտեսական ինտեգրման միջազգային կազմակերպություն է, որն ունի միջազգային իրավասուբյեկտություն:

Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններն են՝ Ռուսաստանի Դաշնությունը, Բելառուսի Հանրապետությունը, Ղազախստանի Հանրապետությունը, Հայաստանի Հանրապետությունը և Ղրղզական Հանրապետությունը: Միության հիմնական նպատակներն են՝ անդամ պետությունների տնտեսությունների կայուն զարգացման համար պայմանների ստեղծումը՝ ի նպաստ դրանց բնակչության կենսամակարդակի բարձրացման շահերի, Միության շրջանակներում ապրանքների, ծառայությունների, կապիտալի ու աշխատուժի միասնական շուկա ձևավորելու ձգտումը, համաշխարհային տնտեսության պայմաններում բազմակողմանի արդիականացումը, համագործակցությունը և ազգային տնտեսությունների մրցունակության բարձրացումը:

ԵԱՏՄ ներկա իրավիճակի գնահատումը (2017թ.)

ԵԱՏՄ երկրների կենտրոնական բանկերի վերաֆինանսավորման տոկոսադրույքները 2017 թ. եռամսյակային տվյալներով (%՝ ժամաբնակաշրջանի վերջի դրությամբ): Միտումները հետևյալն են.

- Ռուսաստանի Դաշնություն՝ 2017թ. տեղի է ունեցել նվազում՝ առաջին եռամսյակի 9,75%-ից աստիճանաբար նավազեցվել է և չորրորդ եռամսյակում սահմնավել է 7,75%:
- Բելառուսի Հանրապետություն՝ 2017 թ. տեղի է ունեցել նվազում՝ առաջին եռամսյակի 15%-ից աստիճանաբար նավազեցվել է և չորրորդ եռամսյակում սահմնավել է 11%:
- Ղազախստանի Հանրապետություն՝ 2017թ. վերաինասնավորման տոկոսադրույքը դրսևորել է հետևյալ վարքագիծը. առաջին եռամսյակում սահմանվել է 5,5%, երկրորդ եռամսյակում բարձրացվել է՝ սահմանվելով 11%, երրորդ եռամսկայում նվազեցվել է՝ սահմանվելով 10,3%, չորրորդ եռամսյակում կրկին նվազեցվել է սահմանվելով 10, 25%:
- Հայաստանի Հանրապետություն՝ 2017թ. վերաֆինանսավորման տոկոսադրույքը սահմանվել է 6%՝ դրսևորելով կայուն վարքագիծ:
- Ղրղզական Հանրապետություն՝ 2017թ. վերաֆինանսավորման տոկոսադրույքը սահմանվել է 5%՝ դրսևորելով կայուն վարքագիծ:

Այս գործիքի կիրառման տեսանկյունից ՀՀ ԿԲ-ն վարել է արդյունավետ քաղաքականություն



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1. ***ԵԱՏՄ անդամ երկրների վերաֆինանսավորման տոկոսադրույքները 2017թ. եռամսյակային տվյալներով***

* *2017 թվականի ապրիլի 1-ից Ղազախստանի Հանրապետության Ազգային բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքը առանձին չի սահմանվում, սակայն հավասարեցվում է Հանրապետության Ազգային բանկի բազային դրույքի արժեքին, որը սահմանվում է համապատասխան ժամկետում:*

ԵԱՏՄ անդամ երկրներում 2017թ. M1 ագրեգատը դրսևորել է հետևյալ վարքագիծը.

- Ռուսաստանի Դաշնություն՝ 2017թ. M1 ագրեգատը դրսևորել է աճման միտում. առաջին եռամսյակին կազմել է 17,306 մլրդ ռուսական ռուբլի, երկրորդ եռամսյակում՝ 18,04 մլրդ ռուսական ռուբլի, երրորդ եռամսյակում՝ 18,009 մլրդ ռուսական ռուբլի, չորրորդ եռամսյակում՝ 18,368 ռուսական ռուբլի:
- Բելառուսի Հանրապետություն՝ 2017թ. M1 ագրեգատը դրսևորել է աճման միտում. առաջին եռամսյակին կազմել է 4,9 մլրդ բելառուսական ռուբլի, երկրորդ եռամսյակում՝ 6,1 մլրդ բելառուսական ռուբլի, երրորդ եռամսյակում՝ 6,3 մլրդ բելառուսական ռուբլի, չորրորդ եռամսյակում՝ 6,2 մլրդ բելառուսական ռուբլի:
- Ղազախստանի Հանրապետություն՝ 2017թ. M1 ագրեգատը դրսևորել է աճման միտում. առաջին եռամսյակին կազմել է 4,928 մլրդ տենգե, երկրորդ եռամսյակում՝ 5,011 մլրդ տենգե, երրորդ եռամսյակում՝ 5,477 մլրդ տենգե, չորրորդ եռամսյակում՝ 4,967 մլրդ տենգե:
- Հայաստանի Հանրապետություն. 2017թ. M1 ագրեգատը դրսևորել է աճման միտու. առաջին եռամսյակին կազմել է 0,626 մլրդ ՀՀ դրամ, երկրորդ եռամսյակում՝ 0,644 մլրդ ՀՀ դրամ, երրորդ եռամսյակում՝ 0,701 մլրդ ՀՀ դրամ, չորրորդ եռամսյակում՝ .0,788 մլրդ ՀՀ դրամ:
- Ղրղզական Հանրապետություն. 2017թ. M1 ագրեգատը դրսևորել է աճման միտում. առաջին եռամսյակին կազմել է 95 մլրդ սոմ, երկրորդ եռամսյակում՝ 107 մլրդ սոմ, երրորդ եռամսյակում՝ 113 մլրդ սոմ, չորրորդ եռամսյակում՝ 137 մլրդ սոմ:

M1 ագրեգատի կառավարման տեսանկյունից ՀՀ ԿԲ-ն կիրառել է արդյունավետ քաղաքականություն:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2. ***ԵԱՏՄ երկրների M2 ագրեգատը համապատասխան երկրի ազգային արժույթի միլիարդ միավորով՝ ըստ 2017թ. եռամսյակային տվյալների***

ԵԱՏՄ անդամ երկրներում 2017թ. M2 ագրեգատը դրսևորել է հետևյալ վարքագիծը.

- Ռուսաստանի Դաշնություն՝ 2017թ. M2 ագրեգատը դրսևորել է աճման միտում. առաջին եռամսյակին կազմել է 38,555 մլրդ ռուսական ռուբլի, երկրորդ եռամսյակում՝ 39,625 մլրդ ռուսական ռուբլի, երրորդ եռամսյակում՝ 18,009 մլրդ ռուսական ռուբլի, չորրորդ եռամսյակում՝ 40,111 ռուսական ռուբլի:
- Բելառուսի Հանրապետություն՝ 2017թ. M2 ագրեգատը դրսևորել է աճման միտում. առաջին եռամսյակին կազմել է 10,9 մլրդ բելառուսական ռուբլի, երկրորդ եռամսյակում՝ 12,3 մլրդ բելառուսական ռուբլի, երրորդ եռամսյակում՝ 39,571 մլրդ բելառուսական ռուբլի, չորրորդ եռամսյակում՝ 12,6 մլրդ բելառուսական ռուբլի:
- Ղազախստանի Հանրապետություն՝ 2017թ. M2 ագրեգատը դրսևորել է աճման միտում. առաջին եռամսյակին կազմել է 12,727 մլրդ տենգե, երկրորդ եռամսյակում՝ 13.6 մլրդ տենգե, երրորդ եռամսյակում՝ 14,084 մլրդ տենգե, չորրորդ եռամսյակում՝ 13,513 մլրդ տենգե:
- Հայաստանի Հանրապետություն. 2017թ. M2 ագրեգատը դրսևորել է աճման միտում. առաջին եռամսյակին կազմել է 1,095 մլրդ ՀՀ դրամ, երկրորդ եռամսյակում՝ 1,141 մլրդ ՀՀ դրամ, երրորդ եռամսյակում՝ 1,228 մլրդ ՀՀ դրամ, չորրորդ եռամսյակում՝ 1,383 մլրդ ՀՀ դրամ:
- Ղրղզական Հանրապետություն. 2017թ. M2 ագրեգատը դրսևորել է աճման միտում. առաջին եռամսյակին կազմել է 116 մլրդ սոմ, երկրորդ եռամսյակում՝ 128 մլրդ սոմ, երրորդ եռամսյակում՝ 136 մլրդ սոմ, չորրորդ եռամսյակում՝ 168 մլրդ սոմ:

M2 ագրեգատի կառավարման տեսանկյունից ՀՀ ԿԲ-ն կիրառել է արդյունավետ քաղաքականություն:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 3. ***ԵԱՏՄ երկրների M2 ագրեգատը համապատասխան երկրի ազգային արժույթի միլիարդ միավորով՝ ըստ 2017թ. եռամսյակային տվյալների***

ԵԱՏՄ անդամ երկրներում 2017թ. փողի բազան դրսևորել է հետևյալ վարքագիծ.

• Ռուսաստանի Դաշնություն՝ 2017թ. փողի բազան դրսևորել է աճման միտում. առաջին եռամսյակին կազմել է 11,544 մլրդ ռուսական ռուբլի, երկրորդ եռամսյակում՝ 11,596 մլրդ ռուսական ռուբլի, երրորդ եռամսյակում՝ 12,916 մլրդ ռուսական ռուբլի, չորրորդ եռամսյակում՝ 13,069 ռուսական ռուբլի:

• Բելառուսի Հանրապետություն՝ 2017թ. փողի բազան դրսևորել է աճման միտում. առաջին եռամսյակին կազմել է 4,3 մլրդ բելառուսական ռուբլի, երկրորդ եռամսյակում՝ 4,3 մլրդ բելառուսական ռուբլի, երրորդ եռամսյակում՝ 5,9 մլրդ բելառուսական ռուբլի, չորրորդ եռամսյակում՝ 6,1 մլրդ բելառուսական ռուբլի:

• Ղազախստանի Հանրապետություն՝ 2017թ. փողի բազան դրսևորել է աճման միտում. առաջին եռամսյակին կազմել է 5,199 մլրդ տենգե, երկրորդ եռամսյակում՝ 5,174 մլրդ տենգե, երրորդ եռամսյակում՝ 6,068 մլրդ տենգե, չորրորդ եռամսյակում՝ 5,162 մլրդ տենգե:

• Հայաստանի Հանրապետություն. 2017թ. փողի բազան դրսևորել է աճման միտում. առաջին եռամսյակին կազմել է 0,97 մլրդ ՀՀ դրամ, երկրորդ եռամսյակում՝ 0,957 մլրդ ՀՀ դրամ, երրորդ եռամսյակում՝ 0,979 մլրդ ՀՀ դրամ, չորրորդ եռամսյակում՝ 1,032 մլրդ ՀՀ դրամ:

• Ղրղզական Հանրապետություն. 2017թ. փողի բազան դրսևորել է աճման միտում. առաջին եռամսյակին կազմել է 82 մլրդ սոմ, երկրորդ եռամսյակում՝ 92 մլրդ սոմ, երրորդ եռամսյակում՝ 98 մլրդ սոմ, չորրորդ եռամսյակում՝ 100 մլրդ սոմ:

Փողի բազայի կառավարման տեսանկյունից ՀՀ ԿԲ-ն կիրառել է արդյունավետ քաղաքականություն:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 4. ***ԵԱՏՄ երկրների փողի բազան համապատասխան երկրի ազգային արժույթի միլիարդ միավորով՝ ըստ 2017թ. եռամսյակային տվյալների***

ԵԱՏՄ անդամ երկրներում ազգային արժույթների փոխանակային միջին փոխարժեքները ԱՄՆ դոլարի նկատմամբ 2017թ. դրսևորել են հետևյալ վարքագիծը.

- Ռուսաստանի Դաշնություն՝ 2017թ. առաջին եռամսյակում ռուսական ռուբլի/ ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը եղել է 58,81, երկրորդ եռամսյակում՝ 57,14, երրորդ եռամսյակում՝ 59, չորրորդ եռամսյակում՝ 58,41:
- Բելառուսի Հանրապետություն՝ 2017թ. առաջին եռամսյակում բելառուսական ռուբլի/ ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը եղել է 1,91, երկրորդ եռամսյակում՝ 1,88, երրորդ եռամսյակում՝ 1,94, չորրորդ եռամսյակում՝ 1,99:
- Ղազախստանի Հանրապետություն՝ 2017թ. առաջին եռամսյակում ղազախական տենգե/ ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը եղել է 322,46, երկրորդ եռամսյակում՝ 314,72, երրորդ եռամսյակում՝ 322,41, չորրորդ եռամսյակում՝ 334,41:
- Հայաստանի Հանրապետություն. 2017թ. առաջին եռամսյակում ՀՀ դրամ/ ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը եղել է 485,78, երկրորդ եռամսյակում՝ 483,36, երրորդ եռամսյակում՝ 478,63, չորրորդ եռամսյակում՝ 483,09:
- Ղրղզական Հանրապետություն. 2017թ. առաջին եռամսյակում Ղրղզական սոմ/ ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը եղել է 69,25, երկրորդ եռամսյակում՝ 68,12, երրորդ եռամսյակում՝ 68,88, չորրորդ եռամսյակում՝ 69,22:

Ինչպես ցույց տվեցին տվյալները, փոխանակային կուրսի էական ոչ մի տատանում տեղի չի ունեցել ԵԱՏՄ երկրների համար:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 5. ***ԵԱՏՄ երկրների ազգային արժույթների փոխանակային միջին փոխարժեքները ԱՄՆ դոլարի նկատմամբ՝ ըստ 2017թ. եռամսյակային միջին տվյալների***

ԵԱՏՄ անդամ երկրներում ՀՆԱ-ն շուկայական գներով 2017թ. ըստ երկրների կազմել է.

- Ռուսաստանի Դաշնություն՝ 92.082 մլրդ. ռուսական ռուբլի,
- Բելառուսի Հանրապետություն՝ 105.199 մլրդ բելառուսական ռուբլի,
- Ղազախստանի Հանրապետություն՝ 51.567 մլրդ ղազախական տենգե,
- Հայաստանի Հանրապետություն՝ 5.58 մլրդ ՀՀ դրամ,
- Ղրղզական Հանրապետություն՝ 493 մլրդ Ղրղզական սոմ:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 6. ***ԵԱՏՄ երկրների ՀՆԱ-ն շուկայական գներով, միլիարդ միավոր ազգային արժույթով, 2017թ.***

ԵԱՏՄ անդամ երկրներում դրամայնացման գործակիցը 2017թ. ըստ երկրների կազմել է.

- Ռուսաստանի Դաշնություն՝ 42.9%,
- Բելառուսի Հանրապետություն՝ 11.9%,
- Ղազախստանի Հանրապետություն՝ 27%,
- Հայաստանի Հանրապետություն՝ 22.1%,
- Ղրղզական Հանրապետություն՝ 27%:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 7. ***ԵԱՏՄ երկրների դրամայնացման գործակիցները (%) 2017թ.***

ԵԱՏՄ անդամ երկրներում գնաճը 2017թ. ըստ երկրների կազմել է.

- Ռուսաստանի Դաշնություն՝ 2.2%,
- Բելառուսի Հանրապետություն՝ 4.5%,
- Ղազախստանի Հանրապետություն՝ 6.5 %,
- Հայաստանի Հանրապետություն. 4.3%,
- Ղրղզական Հանրապետություն. 3.2%:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 8. ***ԵԱՏՄ երկրներում գնաճը (%) 2017թ.***

ԵԱՏՄ անդամ երկրներում տնտեսական ակտիվության ցուցանիշը 2017թ. ըստ երկրների կազմել է.

- Ռուսաստանի Դաշնություն՝ 0.3%,
- Բելառուսի Հանրապետություն՝ 4.6%,
- Ղազախստանի Հանրապետություն՝ 4.7%,
- Հայաստանի Հանրապետություն՝ 10.2%,
- Ղրղզական Հանրապետություն՝ 3.2%:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 9. ***ԵԱՏՄ երկրներում տնտեսական ակտիվության ցուցանշը (%), 2017թ.***

**Աղբյուրը՝ https://tradingeconomics.com*

ԱՂՅՈՒՍԱԿ 1. *ՀՀ և ԵԱՏՄ երկրների առևտրաշրջանառությունը*

	2016 թ. I տարվա կես, մլն. ԱՄՆ դոլար	*Տեսակարար կշիռը 2016 թ., I տարվա կես, %*
ԵԱՏՄ	18979,5	100,00
Հայաստան - Բելառուս	13,8	0,07
Հայաստան - Ղազախստան	2,4	0,01
Հայաստան - Ղրղզստան	0,1	0,00
Հայաստան - Ռուսաստան	537,6	2,83

Համաձայն 2016 թվականի առաջին կիսամյակի տվյալների, ՀՀ-ի համար հիմնական գործընկեր է հանդիսացել ՌԴ-ն:

Ներկայացնենք ԵԱՏՄ ընթացիկ և ապագա ռազմավարական քայլերը, որոնք կհուշեն միության հեռանկարները:

- 2017 թ. - Միասնական բորսայական տարածքի ստեղծում:
- 2018 թ. - Մրցակցության ոլորտում խախտումների համար վարչական և քրեական պատասխանատվության վերաբերյալ ԵԱՏՄ-ի անդամ պետությունների օրենսդրության միավորում:
- 2019 թ. - Էներգետիկայի ընդհանուր շուկայի ստեղծում:
- 2020 թ. - Ակցիզային նիշի տակ վաճառվող ապրանքների միասնական շուկայի ստեղծում (ալկոհոլ, ծխախոտ):
- 2022 թ. - Միասնական աուդիտորական ծառայությունների շուկայի ստեղծում:
- 2023 թ. - Ինտեգրված արժութային շուկայի ստեղծում
- 2025 թ. - Համաձայնեցված ֆինանսական քաղաքականություն: Նավթի և նավթամթերքների միասնական շուկայի ստեղծում: Միասնական ֆինանսական շուկա: Գազի ընդհանուր շուկա:

Մշակված է մինչև 2025 թվականը հեռանկարում ԵԱՏՄ թվային տարածքի ձևավորման և զարգացման ռազմավարության նախագիծը: Նախնական գնահատականներով, Միության երկրների թվային տնտեսության ներդրումը ՀՆԱ հավելաճում պետք է կազմի տարեկան 20%: Նույնքան ծավալով պետք է աճի տնտեսական գործընթացների արդյունավետությունը՝ ենթակառուցվածքների և կառավարման համակարգերի թվային վերափոխման հաշվին:

Գծապատկերները և աղյուսակները կազմել են հեղինակները՝ ըստ ներկայացված տվյալների.
Բելառուսի Ազգային բանկ. http://www.nbrb.by;
ՌԴ-ի Կենտրոնական բանկ. https://www.cbr.ru;
Ղազախստանի Ազգային բանկ. http://www.nationalbank.kz;
ՀՀ Կենտրոնական բանկ. https://www.cba.am;
Ղրղզստանի Ազգային բանկ. http://www.nbkr.kg;
ԵԱՏՄ պաշտոնական վեբ կայք. http://www.eaeunion.org: